

TR 75-08-01



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ խորհրդի
«15» մայիս 2018թ. որոշմամբ
խորհրդի նախագահ՝

Գ. ԶԱՔԱՐՅԱՆ _____
ստորագրություն

«ՌԵՍՈ»
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ՀԴԴԵՀԻՑ,
ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԵՎ ԱՅԼ ՎՆԱՍՆԵՐԻՑ
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	3
2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ.....	4
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ՊԱՏԱՀԱՐՆԵՐ	6
5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ.....	14
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ.....	14
7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ	16
8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՔՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ	17
10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	20
11. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	21
12. ՎՆԱՍԻ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ.....	25
13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ	29

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և համապատասխանում են ՀՀ ԿԲ կողմից «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ տրված ԱՊՈ թիվ 0010 Լիցենզիայի «Հրդեհից և բնական աղետներից ապահովագրության» և «Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրության» դասերին:

1.2. ՀՀ օրենսդրության համաձայն և Պայմանների հիման վրա «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ապահովագրող) կնքում է գործունակ ֆիզիկական անձանց պատկանող գույքի հրդեհից, բնական աղետներից և գույքին հասցված այլ վնասներից ապահովագրության պայմանագրեր/վկայագրեր (այսուհետ՝ Պայմանագիր/Վկայագիր):

1.3. Սույն Պայմանների հիման վրա կարող են մշակվել ապահովագրական ծրագրեր (պրոդուկտներ) (այսուհետ՝ Ծրագիր):

2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍՎԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. **Ապահովագրող՝ «ՌԵՍՈ»** Ապահովագրական ՓԲԸ,

2.2. **Ապահովադիր՝** Ապահովագրողի հետ Պայմանագիր/Վկայագիր կնքած գործունակ ֆիզիկական կամ իրավաբանական անձ,

2.3. **Շահառու՝** Ապահովադրի կողմից նշանակված ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով Ապահովագրական հատուցում ստանալու իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով օրենքով, այլ իրավական ակտով ունի ապահովագրված գույքի պահպանման շահ,

2.4. **Ապահովագրության օբյեկտ՝** Ապահովադրի (Շահառուի) գույքային շահերը՝ կապված գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման հետ,

2.5. **Ապահովագրության պայմաններ՝** սույն փաստաթղթում շարադրված ապահովագրության պայմաններ, որոնց հիման վրա կնքվում է ապահովագրության Պայմանագիր(Վկայագիր): Ապահովագրության պայմանները հանդիսանում են ապահովագրության Պայմանագրի (Վկայագրի) անբաժանելի մասը,

2.6. **Ապահովագրության պայմանագիր (վկայագիր)՝** Ապահովագրողի և Ապահովադրի միջև գրավոր համաձայնություն, որի ուժով Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված վճարի (այսուհետ՝ Ապահովագրավճար) դիմաց, Պայմանագրում/Վկայագրում նախատեսված պատահարի (այսուհետ՝ Ապահովագրական պատահար) տեղի ունենալու արդյունքում, հատուցել Ապահովադրին (Շահառուին) այդ պատահարի արդյունքում ապահովագրված գույքին հասցված վնասը,

2.7. **Ապահովագրական գումար՝** Պայմանագրով/Վկայագրով սահմանված գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է Ապահովագրական պատահարի տեղի ունենալու պարագայում, Պայմանագրով/Վկայագրով նախատեսված կարգով վճարել Ապահովագրական հատուցում,

2.8. **Ապահովագրական ռիսկ՝** առաջանալու որոշակի հավանականությամբ և պատահականությամբ Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով առաջացող վնասի հնարավոր մեծություն

2.9. **Ապահովագրական պատահար՝** ապահովագրական Պայմանագրով/Վկայագրով նախատեսված դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալու ուժով Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին կամ Շահառուին վճարել Ապահովագրական հատուցում,



2.10. Ապահովագրավճար՝ ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով սահմանված չափով և պայմաններով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր Ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար,

2.11. Ապահովագրական հատուցում՝ Ապահովագրական պատահար տեղի ունենալու արդյունքում Ապահովագրողի կողմից Պայմանագրի/Վկայագրի հիման վրա Ապահովադրին/Շահառուին վճարման ենթակա գումար՝ դրամական արտահայտությամբ կամ համարժեք գույքով,

2.12. Չհատուցվող գումար՝ Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցման մեջ, որը սահմանվում է ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով՝ կոնկրետ գումարի կամ Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Չհատուցվող գումարի տեսակներն են՝

1) պայմանական չհատուցվող գումար, որի դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասը չի գերազանցում ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով նախատեսված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը.

2) ոչ պայմանական չհատուցվող գումար, որի դեպքում Ապահովագրողն ազատվում է որոշակի մասով հատուցում իրականացնելուց՝ անկախ վնասի կամ կորստի ընդհանուր չափից:

2.13. Հատուցման սահմանաչափ՝ ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով որևէ Ապահովագրական ռիսկի համար նախատեսված Ապահովագրական հատուցման գումարի սահման, որը կիրառվում է ապահովագրված ամբողջ գույքի կամ դրա մի մասի նկատմամբ, մեկ Ապահովագրական պատահարի հաշվարկով կամ ապահովագրության Պայմանագրի ողջ ժամանակահատվածի համար:

2.14. Սուրբոգացիա (հետադարձ պահանջի իրավունք)՝ Ապահովագրական պատահարի տեղի ունենալու արդյունքում Ապահովադրին պատճառված վնասից բխող (Շահառուի) նրա վնասը պատճառած անձի նկատմամբ պահանջի իրավունքի անցումը Ապահովագրողին՝ հատուցված գումարի մասով

2.15. Մտածելու ժամանակ՝ Ֆիզիկական անձ հաճախորդի իրավունք՝ առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը/Վկայագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում,

2.16. Ապահովագրական ծրագիր՝ Պայմանագրի/Վկայագրի մեջ ներառված ապահովագրական ծածկույթներ (ռիսկեր):

2.17. Սույն Պայմաններում կիրառվող հասկացությունների պարզաբանման բացակայության դեպքում դրանց պարզաբանումը իրականացվում է ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

2.18. ՀՀ օրենսդրության և նորմատիվ ակտերում որևէ հասկացության պարզաբանման բացակայության դեպքում տվյալ հասկացության նշանակությունը պարզաբանվում է իր ուղղակի լեզվական նշանակությամբ:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

3.1. Սույն Պայմանների համաձայն Ապահովագրության օբյեկտ է հանդիսանում Ապահովադրի (Շահառուի) ՀՀ օրենսդրությանը չհակասող գույքային շահերը՝ կապված գույքի օրինական հիմքերով տիրապետման, օգտագործման և տնօրինման հետ:

3.2. Սույն Պայմաններով ապահովագրության ենթակա են հետևյալ շարժական և անշարժ գույքը.

3.2.1. շենքերի, շինությունների, կառույցների, բնակարանների կամ սենյակների կոնստրուկտիվ տարրերը, այդ թվում՝ պատուհանների և դռների կոնստրուկցիաները (բացի միջսենյակայիններից),



Էլեկտրահաղորդալարերի ցանցը, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման համակարգերի խողովակաշարերը,

3.2.2. հարդարման տարրերը, այդ թվում՝ բոլոր ներքին և/կամ արտաքին երեսպատման և ներկարարական աշխատանքները, ներքին հարդարման աշխատանքները, պատերի, հատակների, առաստաղների ծածկույթները, միջսենյակային դռների կառույցները, ներառյալ ապակեպատումը, միջսենյակային պատուհանային կոնստրուկցիաները,

3.2.3. տեխնիկական սարքավորումները, որոնք իրենց մեջ ներառում են ջեռուցման համակարգերը (այդ թվում հատակի, պատերի, առաստաղի տաքացման համակարգերը), հսկողության և պաշտպանության համակարգերը (այդ թվում տեսախցիկները), հրդեհային անվտանգության, օդափոխության, օդորակման, ջրամատակարարման (այդ թվում՝ ջրակողպման սարքավորումները, լվացարանները, լոգարանները, լոգախցիկներ և այլն), կոյուղու (այդ թվում սանհանգույցի սանտեխնիկական սարքավորումները), գազամատակարարման, էլեկտրասնուցման համակարգերը, Պայմանագրում/Վկայագրում նշված այլ սարքավորումները,

3.2.4. շարժական գույքը, որն իր մեջ ներառում է տնային և անձնական կենցաղի առարկաները, այդ թվում՝ կահույք, կենցաղային առարկաներ, աուդիո-վիդեո տեխնիկա, երաժշտական գործիքներ, սպասք, ներքին հարդարման իրեր և այլն,

3.2.5. լանդշաֆտային կառույցներ և պատվարներ, լանդշաֆտային դիզայնի տարրեր, հողամասի ինժեներական համակարգեր,

3.2.6. հողատարածքներ, այդ թվում հողի շերտը, բացառությամբ բուսական ծածկույթի և արհեստական տնկիների (թփերի, ծառեր, ծաղիկներ, խոտ), լանդշաֆտային դիզայնի տարրերի և ցանկացած տեսակի կառույցների: Հողատարածք ասելով հասկացվում է երկրի մակերեսի մասը, որն ունի կոնկրետ սահմաններ, մակերես, գտնվելու վայր և իրավական կարգավիճակ, գրանցված է գործող օրենսդրությամբ:

3.2.7. Պայմանագրում/Վկայագրում նշված այլ գույք, բացառությամբ սույն Պայմանների 3.5-րդ կետում նշվածներից:

3.3. Միայն Պայմանագրում/Վկայագրով նախատեսված լինելու դեպքում, գույքի ամբողջական և մանրամասն ցանկի առկայության և Ապահովագրական գումարների որոշմամբ, ապահովագրության ենթակա է նաև հետևյալ գույքը

3.3.1. թանկարժեք քարերից կամ մետաղներից պատրաստված իրերը,

3.3.2. գեղանկարները, նկարները, քանդակները, գրքերը, նամականիշերը, մետաղադրամները և արվեստի այլ ստեղծագործությունների հավաքածուները,

3.3.3. կրոնական նախապատվության առարկաները,

3.3.4. պլաստիկ քարտերը՝ նախատեսված վճարային համակարգերով վճարումներ կատարելու համար,

3.3.5. շինարարական պատրաստության բարձր մակարդակ ունեցող անավարտ շինարարությամբ շենքերը, շինությունները և կառույցները (պարտադիր է համարվում հիմքի, պատերի, տանիքի, փակ լուսամուտախորշերի և դռնախորշերի առկայությունը),

3.3.6. համակարգչային և համանման համակարգերի տեղեկատվության տեխնիկական կրիչները, մասնավորապես մագնիսական ժապավենները և տեսաերիզները, մագնիսական սկավառակները, հիշողության բլոկները և այլն,

3.3.7. շինարարական, գյուղատնտեսական մեքենաները և սարքավորումները, կցորդները, ժամանակավոր կացարանները, տրանսպորտային միջոցները, բացառությամբ սույն Պայմանների 3.5.7-րդ ենթակետում նշվածներից:

3.4. Արվեստի ստեղծագործությունների, հազվագյուտ օբյեկտների, կրոնական նախապատվության առարկաների ապահովագրությունն իրականացվում է միայն Ապահովադրի կողմից



Ապահովագրության օբյեկտների իսկության և արժեքի մասին լիցենզավորված փորձագետի եզրակացությունը ներկայացնելու դեպքում:

3.5. Բոլոր դեպքերում ապահովագրության ենթակա չեն և չեն հատուցվում՝

3.5.1. կանխիկ փողը՝ ՀՀ դրամով և արտարժույթով,

3.5.2. բաժնետոմսերը, պարտատոմս և այլ արժեթղթեր,

3.5.3. ձեռագրերը, նախագծերը, գծագրերը և այլ փաստաթղթերը, հաշվապահական և գործառնական այլ մատյանները,

3.5.4. մոդելները, մակետները, նմուշները, ձևաթղթերը և այլն,

3.5.5. ձուլակտորներով թանկարժեք մետաղները և թանկարժեք քարերը՝ առանց շրջանակների,

3.5.6. համակարգչային տեխնիկական կրիչների և նմանատիպ համակարգերի վրա պարունակվող տեղեկատվությունը,

3.5.7. պետական մարմիններում գրանցման ենթակա տրանսպորտային միջոցները,

3.5.8. Ապահովադրի (Շահառուի) սեփականությունը չհանդիսացող կամ վարձակալված, սակայն ապահովագրության տարածքում գտնվող շարժական գույքը,

3.5.9. Ապահովագրության տարածքում՝ բաց երկնքի տակ պահվող կամ բաց կառույցների/ծածկերի ներսում պարունակվող շարժական գույքը, նույնիսկ եթե այն պաշտպանված է փափուկ նյութերով (պարուսինով, թաղանթով, փշովի կոնստրուկցիայով և նմանատիպ այլ միջոցներով),

3.5.10. կենդանիները,

3.5.11. փայտից ծածկույթով և դյուրավառ պատերով բնակարանները, երրորդ և չորրորդ կարգի վթարային, խարխուլ կամ կապիտալ վերանորոգման ենթակա դուրս գրված շենքերն ու շինությունները,

3.5.12. սննդամթերքը, ոգելից խմիչքները և ծխախոտը, օձանելիքները, կոսմետիկ միջոցները,

3.5.13. գույքը, որը գտնվում է այնպիսի գոտում, որին սպառնում են փլուզումներ, սողանքներ, ջրհեղեղներ, ինչպես նաև ռազմական գործողությունների կամ բնական աղետների գոտում՝ նման վտանգի մասին սահմանված կարգով հայտարարելու պահից սկսած,

3.5.14. ՀՀ օրենսդրությանը համապատասխան շրջանառությունից հանված կամ սահմանափակ շրջանառության այլ գույք:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

Սույն Պայմաններով կարող են ապահովագրվել Ապահովադրի (Շահառուի) գույքային շահերը՝ կապված գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման հետ, հետևյալ Ապահովագրական ռիսկերի հետևանքով Ապահովագրական պատահարների տեղի ունենալուց.

4.1. «ՀՐԴԵՆ, ԿԱՅԾԱԿԻ ՀԱՐՎԱԾ, ԳԱԶԻ ՊԱՅԹՅՈՒՆ»

Սույն ռիսկի գծով հատուցվում է վնասը, որը հետևանք է.

ա)ապահովագրված գույքի վրա կրակի, վառվող ապրանքի, տաք գազերի, հրդեհի ընթացքում բարձր ջերմաստիճանի ազդեցության,

բ)ապահովագրված գույքի վրա կայծակից առաջացած էլեկտրական պարպման (կայծակի հարված) ազդեցության,

գ)ապահովագրված գույքի վրա հրդեհի մարման և կանխարգելման նպատակով օգտագործված կրակմարիչ միջոցների ազդեցության,

դ) գազի պայթյունի:



Սույն Պայմանների շրջանակներում **հրդեհ** ասելով հասկացվում է կրակի վառման և պահպանման հատուկ վայրերից դուրս առաջացած անվերահսկելի այրումը, այդ թվում նաև հրկիզումը, որն ունակ է ինքնուրույն տարածվելու և նյութական վնաս հասցնելու,

Սույն Պայմանների շրջանակներում **կայծակի հարված** ասելով հասկացվում է ամպրոպից առաջացած էլեկտրական լիցքը, որի դեպքում էլեկտրականությունը ջերմային, մեխանիկական և էլեկտրական ազդեցություն է թողնում ապահովագրված գույքի վրա,

Սույն Պայմանների շրջանակներում **պայթյուն** ասելով հասկացվում է կարճ ժամկետում սահմանափակ ծավալով մեծ էներգիայի նպատակային անջատման գործընթացը, որը պայմանավորված է գազերի ընդարձակման հատկությամբ:

4.1.1. Միայն Վկայագրով հատուկ նշված լինելու դեպքում, հատուցման ենթակա է հոսանքի էլեկտրական կարճ միացման ազդեցության, էլեկտրացանցի բարձր լարման անկման կամ բարձրացման, էլեկտրացանցում բեռնվածություն, առանց հրդեհի առաջացման կայծակի հարվածի հետևանքով էլեկտրացանցին միացված ապահովագրված սարքավորումներին, տեխնիկային գույքին հասցված վնասը:

4.1.2. «ՀՐԴԵՀ, ԿԱՅԾԱԿԻ ՀԱՐՎԱԾ, ԳԱԶԻ ՊԱՅԹՅՈՒՆ» ռիսկի գծով Ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ.

ա) վնասը, որն առաջացել է ապահովագրված գույքը տեխնոլոգիական գործընթացին համապատասխան (օրինակ՝ չորացում, եփում, արդուկում, տապակում, ջերմային մշակում կամ մետաղների հալեցում) կրակով, ջերմությամբ մշակելու կամ այլ ջերմային ազդեցության ենթարկելու հետևանքով՝ դրա հատկությունները փոխելու նպատակով,

բ) ապահովագրված սարքավորմանը, սարքերին, տեխնիկային հասցված վնասը, որն առաջացել է էլեկտրական հոսանքի կարճ միացման հետևանքով, էլեկտրացանցում բեռնվածության, էլեկտրական հոսանքի լարման անկման կամ բարձրացման, առանց հրդեհի առաջացման կայծակի հարվածի, թափառող ալիքների կամ մագնիսականության ազդեցության արդյունքում, եթե Պայմանագրում/Վկայագրում այլ բան նախատեսված չէ:

4.2. «ՋՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍ»

Սույն ռիսկի գծով հատուցվում է.

ա) Ապահովագրված գույքին ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու և հակահրդեհային համակարգերի վթարի հետևանքով այդ համակարգերի ջրի կամ գոլորշու հասցրած վնասները, այդ թվում՝ ապահովագրված տարածքից դուրս տեղի ունեցած վթարների հետևանքով ապահովագրված գույքին հասցրած վնասները,

բ) վնասը, որը պատճառվել է Ապահովադրին (Շահառուին) չպատկանող այլ բնակելի տարածքներից հոսած ջրի կամ այլ հեղուկի հետևանքով:

4.2.1. Շենքերի, շինությունների, կառույցների, բնակարանների կամ սենյակների ապահովագրության ժամանակ հատուցվում են նաև.

ա) ապահովագրված շենքերում, շինություններում, կառույցներում, բնակարաններում կամ սենյակներում անմիջականորեն գտնվող ջրատար, ջեռուցման, կոյուղու և հրդեհային համակարգերի հանկարծակի վնասի վերացման հետ կապված ծախսերը: Յուրաքանչյուր Ապահովագրական պատահարի գծով խողովակների փոփոխման անհրաժեշտության դեպքում հատուցվում են խողովակների վնասված հատվածի երկու գծամետրի փոփոխության արժեքը չգերազանցող ծախսերը: Խողովակաշարերին կցված համակարգերի և սարքերի (ներառյալ ծորակները, բաքերը, լոգարանները, ջերմափոխանակիչ, ջեռուցման կաթսաները, բոյլերները և այլն) փոփոխման անհրաժեշտության



դեպքում յուրաքանչյուր Ապահովագրական պատահարի համար վերանորոգման և այդպիսի համակարգերի փոփոխման ծախսերը հատուցվում են Պայմանագրի/Վկայագրի ընդհանուր Ապահովագրական գումարի 0.1% չգերազանցող չափով, եթե այլ բան սահմանված չէ Պայմանագրի/Վկայագրով,

բ) սույն Պայմանների 01. կետի ա) ենթակետում նշված, անմիջականորեն ապահովագրված շենքերում, շինություններում և կառույցներում գտնվող անհատական ջեռուցման համակարգերով անհատական կառույցներում -30°C ցածր օդի ջերմաստիճանի դեպքում խողովակների սառեցումից առաջացած ծախսերը: Այս դեպքում յուրաքանչյուր Ապահովագրական պատահարի գծով խողովակների փոփոխման անհրաժեշտության դեպքում հատուցվում են խողովակների վնասված հատվածի երկու գծամետրի փոփոխության արժեքը չգերազանցող ծախսերը:

4.2.2. «ԶՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍ» ռիսկի գծով Ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ.

ա) Պայմանների 4.2 կետի ա) և բ) ենթակետերով և 4.2.1. կետով նշված պատճառներից բացի այլ գործոնների հետևանքով պատճառված վնասը, այդ թվում ապահովագրված տարածքների մաքրման, ջրհեղեղների, խորտակման կամ ստորգետնյա ջրերի մակարդակի բարձրացման,

բ) վնասը, որը հասցվել է ապահովագրության տարածք հեղուկների ներթափանցման հետևանքով (այդ թվում անձրևի, ձյան, որոտի և կեղտի)՝ չփակված պատուհանների, դռների, ինչպես նաև կանխամտածված բացված անցքերի միջոցով կամ շենքերի, շինության և կառույցների ապամոնտաժման կամ կոնստրուկցիայի թերությունների հետևանքով, ինչպես նաև տանիքի, դռների, պատուհանների՝ ջրի ներթափանցման հնարավորության և միջբլոկային/բլոկային ջրամեկուսացման թերությունների հետևանքով,

գ) ապահովագրված շենքի կամ տարածքի վերանորոգման կամ վերակառուցման հետևանքով առաջացած վնասը,

դ) ապահովագրված տարածքից կամ շինություններից դուրս գտնվող խողովակաշարերի և դրանց հետ կապված համակարգերի և սարքերի վերանորոգման կամ փոխարինման հետ կապված ծախսերը,

ե) Ապահովադրի կողմից վթարային կամ ոչ պիտանի ջրատարի, ջեռուցման, կոյուղու և հրդեհային համակարգերի շահագործման, Ապահովադրի կողմից այդ համակարգերի շահագործման նորմատիվային ժամկետները խախտելու կամ չպահպանելու դեպքում առաջացած վնասը,

զ) Ապահովագրված տարածքի ներսում երկարատև խոնավության հետևանքով առաջացած վնասը (բորբոս, սունկ և այլն), ինչպես նաև ցանկացած վնասը, որն առաջացել է ջրի երկարատև կամ պարբերական ազդեցության հետևանքով:

4.2.3. «ԶՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍ» ռիսկով ապահովագրելու դեպքում Ապահովադիրը պարտավոր է ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում՝

ա) Ապահովագրության վայրում ապահովել ջրամատակարարման, ջեռուցման և հակահրդեհային համակարգերի պատշաճ շահագործումը, ժամանակին դրանց սպասարկումը,

բ) երբ շենքերի, շինությունների, կառույցների շահագործման դեպքում շրջակա օդի ջերմաստիճանը բացասական է, անհատական ջեռուցման համակարգում կիրառել այնպիսի հեղուկներ, որոնք չեն սառչում շրջակա օդի մինչև - 30°C ջերմաստիճանի դեպքում,

գ) շենքերի, շինությունների, կառույցների շահագործման ընդմիջման ընթացքում Ապահովադիրը պարտավոր է դատարկել անհատական ջեռուցման համակարգի ջուրը՝ շրջակա օդի ցածր ջերմաստիճանի (բացասական) դեպքում:

4.3. «ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐ»

Սույն ռիսկի գծով հատուցվում է վնասը, որը հետևանք է.

ա) երկրաշարժի, հրաբխի ժայթքման,



- բ) ջրհեղեղի, հեղեղման,
- գ) մրրկասյան, փոթորիկի, բքի,
- դ) սողանքի, փլուզման, քարահոսքի, ձնահոսքի, ցեխահոսքի,
- ե) կարկուտի:

Երկրաշարժ՝ երկրի ընդերքում տեղի ունեցող բնական երևույթների հետևանք, որն արտահայտվում է երկրակեղևի կտրուկ տատանումներով և ցնցումներով,

Հրաբխի ժայթքում՝ հրաբխային գործընթաց, որն ուղեկցվում է հրաբխի խառնարանից գազերի, քարերի, մոխրի և մագմայի եռման արտահոսքով,

Ջրհեղեղ, հեղեղում՝ ջրային զանգվածի արտահոսք ջրավազանի սովորական սահմաններից, որն առաջանում է ձյան ինտենսիվ հալոցքի, մեծ քանակությամբ տեղումների, ջրի՝ քամու կողմից քշվելու, սառցե խցանումների, ջրամբարների և ամբարտակների վնասվելու, լեռնային զանգվածների՝ ջրի ակունքներ թափվելու արդյունքում, ինչը խոչընդոտում է ջրի բնականոն հոսքին,

Փոթորիկ՝ հանկարծակի, ուժգին, ուղղությունը հաճախ փոխող կարճատև քամի, որի արագությունը գերազանցում է 16,6 մ/վ,

Բուք՝ երկարատև և ուժեղ քամի, որի արագությունը գերազանցում է 16,6 մ/վ,

Մրրկասյուն՝ երկարատև և ուժեղ քամի, որի արագությունը գերազանցում է 35 մ/վ,

Սողանք՝ լանջից ներքև հողի զանգվածի տեղաշարժ (սահք)՝ սեփական քաշի և լրացուցիչ բեռնվածության ադեցությամբ,

Փլուզում, քարահոսք՝ լեռնային ժայռերի հանկարծակի փլուզում՝ կայունության կորստի և թուլացման հետևանքով, լեռնային ժայռերից քարերի հոսք,

Ձնահոսք՝ ձյան զանգված, որն ընկնում կամ սահում է լեռնալանջերից ավելի քան 20 մ/վ արագությամբ,

Ցեխահոսք՝ ցեխային կամ ցեխաքարային հոսանքներ, որոնք հանկարծակի առաջանում են լեռնային գետերի ակունքներում հեղեղումների պատճառով՝ առատ տեղումների և ինտենսիվ ձնհալքի արդյունքում,

Կարկուտ՝ մթնոլորտային տեղումների տարատեսակ, որն արտահայտվում է երկնքից թափվող տարբեր չափի սառցե գոյացությունների տեսքով:

4.3.1. Երկրաշարժից, սողանքից, գրունտի նստվածքից վնասները հատուցման ենթակա են միայն այն դեպքում, եթե ապահովագրված շենքերի, շինությունների և կառույցների նախագծման, շինարարության և շահագործման ժամանակ պատշաճ կերպով հաշվի են առնվել այդ շենքերի ու շինությունների տեղանքի սեյսմիկ և երկրաբանական պայմանները:

4.3.2. Փոթորկից, բքից առաջացած վնասները հատուցվում են միայն այն դեպքում, եթե վնաս պատճառած քամու արագությունը գերազանցել է 16,6 մ/վ և հաստատված է ՀՀ համապատասխան հիդրոմետ ծառայության տեղեկանքով:

4.3.3. Միայն Պայմանագրով/Վկայագրով հատուկ նախատեսված լինելու դեպքում Ապահովագրողը հատուցում է ապահովագրված շենքին, շինություններին, կառույցներին դրսից ամրակցված առարկաների վնասը՝ տախտակներ, ալեհավաքներ, օդորակիչներ, բաց էլեկտրական լարեր եւ այլն:

4.3.4. «ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐ» ռիսկի գծով Ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ վնասը, որն առաջացել է.

- ա) փլուզման, քարահոսքի, սողանքի, գրունտի նստելու, որոնք առաջացել են ապահովագրության տարածքում կամ անմիջական հարևանությամբ պայթեցման աշխատանքներից, փոստրակներից կամ քարհանքերից գրունտի հանման, աղբահանության, հողի խտացման, հողային կամ շինմոնտաժային աշխատանքների, ինչպես նաև օգտակար հանածոների արդյունահանման և մշակման արդյունքում,



բ) ապահովագրության տարածքներ չփակված պատուհաններով, դռներով և անցքերով, ինչպես նաև բաց անցքերի միջոցով կամ շենքերի, շինության և կառույցների ապամոնտաժման, կոնստրուկցայի, միջբովկային/բովկային ջրամեկուսացման թերությունների, տանիքի, դռների, պատուհանների ջրի ներթափանցման հնարավորության հետևանքով՝ անձրևի, ձյան, որոտի, կեղտի ներթափանցման, եթե այդ անցքերը չեն առաջացել բքի, փոթորկի կամ մրրկայան հետևանքով,

գ) ջրի ազդեցությամբ, սակայն Պայմանների **Error! Reference source not found.** կետում նշված պատճառներից տարբերվող այլ պատճառներով, այդ թվում նաև գույքի վնասը անձրևային, ջերմացման, ստորգետնյա ջրերի բարձրացման, տանիքի և պատերի արտահոսքից,

դ) շենքերի, շինությունների և կառույցների խարխուլ լինելու պատճառով, ինչպես նաև այդ խարխուլ շենքերում, շինություններում և կառույցներում ապահովագրված գույքին հասցված վնասը:

4.3.5. Սույն Պայմանների համաձայն հատուցման ենթակա չէ նաև Ապահովագրված օբյեկտի տանիքին հասցված վնասը, եթե տանիքը մետաղյա չէ, ինչպես նաև, եթե պատճառված վնասի հետևանքով անհնարին չի դարձել տանիքի հետագա նպատակային օգտագործումը:

4.3.6. Անավարտ/կիսակառույց, կապիտալ վերանորոգման համար ազատված կամ Ապահովադրի (Շահառուի), Մեփականատիրոջ կամ ապահովագրված գույքը փաստացի օգտագործող անձանց կողմից երկար ժամանակով չշահագործվող շենքերը, շինությունները և/կամ կառույցները «Տարերային աղետներ» ռիսկի գծով ապահովագրության չեն ընդունվում:

4.3.7. Կիսակառույց/անավարտ շենքերը, շինությունները և/կամ կառույցները, որոնք երկար ժամկետով ազատված են կապիտալ վերանորոգման կամ այլ պատճառով այն անձանց կողմից, ովքեր օգտագործում են այն նպատակային նշանակության համար, «*SURVEILANCE ԱՂԵՏՆԵՆ*» ռիսկի գծով ապահովագրության չեն ընդունվում: Ապահովադիրը պարտավոր է անհապաղ տեղեկացնել Ապահովագրողին ապահովագրված շենքերի, շինությունների և կառույցների կապիտալ վերանորոգման կամ այլ պատճառով ազատելու մասին: Ապահովագրողն իրավունք ունի կասեցնել Պայմանագրի/Վկայագրի գործողությունը այդ ժամանակահատվածի համար:

4.4. «ԿՈՏՐԱՆՔՈՎ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ, ԿՈՂՈՊՈՒՑ, ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ»

Սույն ռիսկի գծով հատուցվում է վնասը, որը հետևանք է.

- ա) կոտրանքով գողության,
- բ) կողոպուտի,
- գ) ավազակության:

4.4.1. Սույն Պայմանների շրջանակներում **կոտրանքով գողություն** ասելով հասկացվում է ապահովագրված գույքի գաղտնի հափշտակությունը բացառապես հետևյալ ճանապարհով.

- ա) դռները, պատուհանները կամ կոնստրուկտիվ տարրերը կոտրելով/ճեղքելով՝ կեռիկների, կեղծ բանալիների, սարքերի կամ այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ,
- բ) ապահովագրության տարածքի սահմաններում գտնվող, գույքը պահպանելու համար նախատեսված, առարկաների կոտրումը, կամ դրանց բացելը՝ կեռիկների, կեղծ բանալիների, սարքերի կամ այլ տեխնիկական միջոցներով,
- գ) շինության կոնստրուկտիվ տարրերը վնասելով (պատեր, հատակ, առաստաղ, տանիք, դռներ, պատուհաններ, այդ թվում ապակիները կոտրելով),
- դ) փակ տարածքներից առարկաների բռնագրավմամբ, որտեղ հանցագործը ներխուժել է սովորական ճանապարհով, և մնացել այնտեղ գաղտնի մինչև դրա փակվելը, իսկ դուրս գալուց օգտագործել է 4.4.1. (ա) կետի միջոցները:



Կեղծ են համարվում այն բանալիները, որոնք պատրաստվել են այն անձանց կողմից կամ հանձնարարությամբ, ովքեր իրավունք չունենին տնօրինելու իրական/բնօրինակ բանալիներին:

Ապահովագրության տարածքից միայն գույքի անհետացման փաստը բավարար չէ ապացուցելու կեռիկների, կեղծ բանալիների և այլ տեխնիկական սարքերի օգտագործումը: Կեղծ բանալիների և այլ տեխնիկական սարքերի կիրառման ապացույց է հանդիսանում փորձաքննության եզրակացությունը:

4.4.2. Սույն Պայմանների շրջանակներում կողոպուտ ասելով հասկացվում է ապահովագրված գույքի բացահայտ հափշտակությունը, որն իրականացվել է անձի նկատմամբ առանց բռնության կամ բռնությամբ, որը վտանգավոր չէ կյանքի և առողջության համար:

4.4.3. Սույն Պայմանների շրջանակներում ավագակություն ասելով հասկացվում է ապահովագրված գույքի հափշտակությունը (այդ թվում նաև դրա փորձը), որն իրականացվել է հետևյալ ճանապարհով.

ա) Ապահովադրի կամ այլ անձանց(ընտանիքի անդամներ, աշխատողներ) նկատմամբ բռնության գործադրմամբ՝ գույքի հափշտակման դիմադրությունը ճնշելու համար,

բ) Ապահովադրի կամ այլ անձանց (ընտանիքի անդամներ, աշխատողներ) կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնալու:

4.4.4. «ԿՈՏՐԱՆՔՈՎ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ, ԿՈՂՈՊՈՒՏ, ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ» ռիսկն ապահովագրելու դեպքում Ապահովադիրը պարտավոր է.

ա) Ապահովադրի կամ նրա հետ բնակվող ընտանիքի անդամների բացակայության ժամանակ ապահովագրված տարածքում ապահովել մուտքերի, ավտոտնակների, նկուղի դռները և բոլոր պատուհանների կողպելը,

բ) Ապահովադրի կամ նրա հետ բնակվող ընտանիքի անդամների բացակայության ժամանակ ապահովագրված տարածքում ապահովել անվտանգության ազդանշանային համակարգի միացումը, եթե ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում նշված է դրա առկայության մասին:

4.4.5. «ԿՈՏՐԱՆՔՈՎ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ, ԿՈՂՈՊՈՒՏ, ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ» ռիսկն ապահովագրելու դեպքում Ապահովագրական ռիսկի մեծացում է համարվում.

ա) ապահովագրված տարածքից բնակիչների երկարատև բացակայությունը (40-ից ավել օր անընդմեջ),

բ) շենքերի, շինությունների վերանորոգումը կամ վերակառուցումը, որտեղ գտնվում է ապահովագրված գույքը, ինչպես նաև հարակից շենքերի և շինությունների վերանորոգումը, կամ այդպիսի շինությունների վրա շինարարական աստիճանների կամ վերելակների տեղադրումը,

գ) անվտանգության ձայնազդանշանային համակարգի անսարք վիճակում գտնվելը,

դ) Ապահովադրի կողմից ապահովագրության տարածքում կողպեքների փոխարինման անհապաղ միջոցառումներ չձեռնարկելը, եթե այդ կողպեքների բանալիները նախկինում կորել են:

4.4.6. «ԿՈՏՐԱՆՔՈՎ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ, ԿՈՂՈՊՈՒՏ, ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ» ռիսկի գծով Ապահովագրական ռիսկ և Ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ վնասը, որը հետևանք է՝

ա) կոտրանքով գողության, կողոպուտի, ավագակության, եթե դա իրականացվել է Ապահովադրի հետ ապրող, նրա հետ համատեղ տնտեսություն վարող անձանց, վարձակալների և/կամ նրա մոտ աշխատողների կողմից,

բ) կոտրանքով գողության, կողոպուտի, ավագակության, եթե դա իրականացվել է պահպանման ձայնազդանշանային համակարգի անջատված կամ անսարք վիճակում գտնվելու ժամանակ, եթե Պայմանագրում/Վկայագրում նշված է նման համակարգի առկայության մասին,

գ) Ապահովագրության տարածքից դուրս գտնվող (տանիքին, պատերի արտաքին կողմին ամրացված, տնամերձ տարածքի վրա) գույքին, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրում/Վկայագրով,



դ) կոտրանքով գողության և կողոպուտից տարբերվող այլ եղանակով ապահովագրված գույքի պակասորդի, անհետացման և անբացատրելի կորստի:

4.5. «ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Սույն ռիսկի գծով հատուցվում է երրորդ անձանց գործողությունների հետևանքով ապահովագրված գույքի պատճառված վնասը պատճառված, որը ՀՀ գործող օրենսդրության համաձայն որակվում է որպես

- գույքի կանխամտածված ոչնչացում կամ վնասում,
- խուլիզանություն,
- վանդալիզմ:

4.5.1. Սույն ռիսկի գծով Ապահովագրողը հատուցում է նաև ապահովագրված կոնստրուկտիվ տարրերին պատճառված (պատեր, առաստաղ, հատակ, տանիք և այլն) վնասները վերացնելու հետ կապված ծախսերը:

4.5.2. «ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ռիսկի գծով Ապահովագրական ռիսկ և Ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ վնասը, որը հետևանք է.

- ա) ապահովագրված գույքի գողության, պակասորդի, անհետացման և անհիմն յուրացման,
- բ) ապահովագրված շենքերի փլուզման, ապահովագրված շենքի վերանորոգման կամ վերակառուցման հետևանքով ապահովագրված շենքերում, շինություններում, կառույցներում և բնակարաններում ճաքերի և այլ թերությունների առաջացման, այդ թվում՝ հարևան շենքերում, շինություններում, կառույցներում իրականացվող վերանորոգման և վերակառուցման հետևանքով, ապահովագրության տարածքում կամ նրա անմիջական մոտակայքում գտնվող հողային կամ շինմոնտաժային աշխատանքների անցկացման, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,
- գ) երրորդ անձանց կողմից ապահովագրված գույքի նկատմամբ հակաօրինական գործողությունների իրականացման, որը Ապահովագրողի կողմից փոխանցվել է այդ անձանց վարձակալության, լիզինգի կամ այլ պայմանագրով,
- դ) ցանկացած պատճառով ջերմաստիճանի փոփոխության, էլեկտրաէներգիայի, ջրի, գազի և ջեռուցման մատակարարման խափանման,
- ե) վարակի, աղտոտման կամ կոռոզիայի,
- զ) ապահովագրված գույքի վրա նկարելու, նկարների փակցնելու, գրելու, գրություններ փակցնելու, պաստառներ տսնձելու և այլ նմանատիպ գործողություններ իրականացնելու:

4.6. «ԲԱՆՈՒՄ, ՀԱՐՎԱԾ»

Սույն ռիսկի գծով հատուցվում է վնասը, որն հետևանք է.

- ա) տրանսպորտային միջոցների հետ բախման,
- բ) կենդանիների հետ բախման,
- գ) ծառերի կամ այլ առարկաների վայր ընկնելու,
- դ) ձյան կամ սառույցի տանիքից ընկնելու,
- ե) թռչող սարքերի կամ դրանց մասերի վայր ընկնելու,
- զ) թռչող սարքերի կողմից արձակված ձայնային ալիքների հարվածի:

4.6.1. «ԲԱՆՈՒՄ, ՀԱՐՎԱԾ» ռիսկի գծով Ապահովագրական ռիսկ և Ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ վնասը, որը հետևանք է.



ա) հարվածների և բախումների, որոնց պատճառ են հանդիսացել Ապահովադրին, Շահառուին, նրանց ընտանիքների անդամներին, Ապահովադրի և Շահառուի հետ համատեղ բնակվող, համատեղ տնտեսություն վարող կամ իրենց մոտ աշխատող անձանց պատկանող տրանսպորտային միջոցները, կենդանիները կամ թռչող սարքերը,

բ) փլուզման, սողանքի, գրունտի նստելու և քարահոսքի, որն առաջացել է ապահովագրության տարածքում կամ դրա անմիջապես մոտակայքում պայթեցման աշխատանքների, փոտրակներից կամ քարհանքներից գրունտի հանման, հողային կամ շինմոնտաժային աշխատանքների, ինչպես նաև օգտակար հանածոների արդյունահանման և մշակման հետևանքով,

գ) վարակի, աղտոտման կամ կոռոզիայի,

դ) տարերային աղետի, կոտրանքով գողության և/կամ կողոպուտի, և/կամ ավազակության, երրորդ անձանց հակաօրինական գործողությունների:

4.7. «ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ, ԴԻՎԵՐՍԻԱ»

Սույն ռիսկի գծով հատուցվում է երրորդ անձանց գործողությունների հետևանքով պատճառված վնասը, որոնք ՀՀ գործող օրենսդրությամբ որակվում են որպես

- ահաբեկչություն,
- դիվերսիա:

Ահաբեկչություն՝ պայթյունի, հրկիզման կամ այլ գործողությունների իրականացում, որոնք ստեղծում են մարդկանց կյանքի կորստի վտանգ, հասցնում են զգալի գույքային վնաս կամ հանգեցնում են այլ հասարակական վտանգավոր հետևանքների, եթե այդ գործողությունները իրականացվել են հասարակական անվտանգությունը խախտելու, բնակչությանը ահաբեկելու կամ իշխանությունների որոշումների կայացման վրա ազդելու նպատակով,

Դիվերսիա՝ պայթյունի, հրկիզման կամ այլ գործողությունների իրականացում, ուղղված ձեռնարկությունների, կառույցների, հաղորդակցության միջոցների և ուղիների, կապի միջոցների, բնակչության կենսապահովման օբյեկտների՝ տնտեսական անվտանգության և ՀՀ պաշտպանության խաթարման նպատակով:

4.8. Սույն Պայմաններով Ապահովադրի գույքը կարող է ապահովագրվել ինչպես բոլոր ռիսկերով, այնպես էլ մեկ կամ մի քանի ռիսկերի համադրությունով:

4.9. Միաժամանակ տեղի ունեցած մի քանի իրադարձությունները, որոնց ի հայտ գալուց իրականացվում է ապահովագրությունը, համարվում են մեկ Ապահովագրական պատահար, եթե այդ դեպքերն ունեն միևնույն առաջացման պատճառը:

4.10. Ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ վնասը, որն առաջացել է ահաբեկչական, դիվերսիոն գործողությունների արդյունքում, եթե ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

4.11. *Բոլոր դեպքերում Ապահովագրական ռիսկ, Ապահովագրական պատահար չի համարվում և հատուցման ենթակա չէ՝*

ա) բազմաբնույթ ռազմական գործողությունների, զորաշարժերի, միջոցառումների, քաղաքացիական պատերազմի, հասարակության կողմից տարբեր ընդվզումների, գործադուլների, առգրավման, բռնագրավման, աշխատանքի ընդհատման, ձերբակալության, քաղաքացիական կամ ռազմական իշխանությունների կարգադրությամբ գույքի ոչնչացման կամ վնասման, հատուկ կամ արտակարգ դրության հայտարարման հետևանքով առաջացած վնասը,

բ) միջուկային պայթյունի, ռադիացիայի կամ ռադիոակտիվ վարակման հետևանքով առաջացած վնասը,

գ) Ապահովադրի (Շահառուի), ինչպես նաև Ապահովադրի իմացությամբ այն անձի կողմից, ում տիրապետության և օգտագործման տակ է գտնվում ապահովագրված գույքը, ՀՀ գործող



- օրենսդրության հակահրդեհային անվտանգության կանոնների, արտադրության տեխնոլոգիաների, անվտանգության կանոնների, շահագործման, ապահովագրված գույքի տեխնիկական սպասարկման կանոնների խախտման կամ չպահանման հետևանքով ապահովագրված գույքին պատճառված վնասը, այդ թվում նաև շենքերի, կառույցների և շինությունների, որտեղ գտնվում է այդ գույքը,
- դ) Ապահովադրի (Շահառուի) կամ նրա ընտանիքի անդամների հետ համատեղ բնակվող, համատեղ տնտեսություն վարող անձանց, կենդանիների կողմից պատճառված վնասը, ինչպես նաև այն անձանց կողմից պատճառված վնասը, ովքեր գտնվում են աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ Ապահովադրի (Շահառուի) հետ,
- ե) Ապահովադրի (Շահառուի) բարոյական վնասը, բաց թողնված օգուտը, եկամտի կորուստը և այլ կողմնակի վնասները,
- զ) ապահովագրված գույքի ինքնահրկիզման, կոռոզիայի, փտման, խմորման, բնական մաշվածության կամ այլ բնական հատկությունների արդյունքում առաջացած վնասը,
- է) որևէ տեսակի բնական կամ արհեստական գործոնի /ջրի, քամու, մեխանիկական և այլ/ երկարատև կամ պարբերական ազդեցության հետևանքով պատճառված վնասը,
- ը) էլեկտրաէներգիայի մատակարարման դադարեցման արդյունքում առաջացած վնասը,
- թ) կոնստրուկցիաների քանդվելու, շենքերի, շինությունների, կառույցների կամ դրանց մասերի փլման արդյունքում ապահովագրված գույքին պատճառված վնասը, եթե դա չի առաջացել Ապահովագրական պատահարի հետևանքով,
- ժ) սույն Պայմանների 3.5-րդ կետում թվարկված՝ ապահովագրությանը ոչ ենթակա գույքին պատճառված վնասը,
- ի) Ապահովադրին (Շահառուին) սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքերով չպատկանող գույքին պատճառված վնասը,
- յ) Ապահովադրի (Շահառուի) երրորդ անձանց հետ պայմանագրային հարաբերություններից բխող հանգամանքների արդյունքում առաջացած վնասը,
- խ) Ապահովադրի (Շահառուի) ՀՀ գործող օրենսդրությանը հակասող գործունեության հետևանքով պատճառված վնասը,

5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

5.1. Գույքը համարվում է ապահովագրված միայն այն տարածքում (շենքերում, շինություններում, կառույցներում կամ հողատարածքի վրա), որը նշված է ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում (Ապահովագրության տարածք) :

5.2. Եթե ապահովագրության տարածքից ապահովագրված գույքը կամ դրա մի մասը բռնագրավվում է, ապա ապահովագրական ծածկույթը այդ գույքի մասով դադարում է գործել:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

6.1. Ապահովագրական գումարը (Հատուցման սահմանաչափը) նշվում է ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում:

6.2. Ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով կարող են սահմանվել Ապահովագրողի Հատուցման սահմանաչափեր՝ որևէ ռիսկի գծով սահմանված գումար, կիրառվող ապահովագրված գույքի ամբողջ կամ դրա մի մասի վրա՝ մեկ Ապահովագրական պատահարի հաշվարկով կամ ապահովագրության գործողության ողջ ժամկետի համար:

6.3. Ապահովագրական գումարը յուրաքանչյուր Ապահովագրության օբյեկտի և Ապահովագրական ռիսկի համար կարող է սահմանվել առանձին:



- 6.4. Եթե ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում նշված Ապահովագրական գումարը ցածր է ապահովագրված գույքի իրական (շուկայական) արժեքից (ոչ լրիվ ապահովագրություն), ապա Ապահովագրողը Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում հատուցում է Ապահովադրին (Շահառուին) ապահովագրված գույքին հասցված վնասը մասնակի՝ Ապահովագրական գումարի և իրական (շուկայական) արժեքի նկատմամբ համամասնորեն, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,
- 6.5. Եթե Պայմանագրում/Վկայագրում նշված Ապահովագրական գումարը (Հատուցման սահմանաչափը) գերազանցում է ապահովագրված գույքի իրական (շուկայական) արժեքը, Պայմանագիրը/Վկայագիրը առոչինչ է համարվում Ապահովագրական գումարի այն մասով, որը Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին գերազանցում է գույքի իրական (շուկայական) արժեքը: Ավել վճարված Ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ:
- 6.6. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կարող է կնքվել նաև «Առաջին ռիսկի» պայմանով, երբ Ապահովագրական հատուցումը հաշվարկվում է առանց հաշվի առնելու իրական (շուկայական) արժեքի ու Ապահովագրական գումարի համամասնությունը, այսինքն՝ վնասի չափով, բայց ոչ ավել քան Պայմանագրով/Վկայագրով սահմանված Ապահովագրական Հատուցման սահմանաչափը և գույքի իրական (շուկայական) արժեքը:
- 6.7. Ապահովագրական հատուցում վճարելուց հետո Ապահովագրական գումարը ինքնաշխատ նվազեցվում է հատուցված գումարի չափով, եթե Պայմանագրում/Վկայագրում այլ բան նախատեսված չէ: Ապահովագրական գումարի նվազեցումը իրականացվում է Ապահովագրական պատահարն ի հայտ գալու օրվանից՝ Ապահովագրողի կողմից տեղի ունեցած իրադարձությունը Ապահովագրական պատահար ճանաչելու դեպքում:
- 6.8. Ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում նշված Ապահովագրական գումարը Ապահովադրի և Ապահովագրողի միջև գույքի իրական (շուկայական) արժեքի վերաբերյալ համաձայնություն չի հանդիսանում:
- 6.9. Ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում կարող է սահմանվել չհատուցվող գումար (ֆրանշիզա), որը վերաբերվում է յուրաքանչյուր Ապահովագրական պատահարին: Պայմանական չհատուցվող գումար սահմանելու դեպքում Ապահովագրողը ազատվում է Ապահովագրական հատուցում իրականացնելուց, եթե վնասի չափը չի գերազանցում պայմանական չհատուցվող գումարի չափը: Եթե վնասի չափը գերազանցում է պայմանական չհատուցվող գումարի չափը, ապա Ապահովագրական հատուցման գումարից ֆրանշիզա չի նվազեցվում: Եթե ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում սահմանված է ֆրանշիզա և նշված չէ ֆրանշիզայի տեսակը (պայմանական կամ ոչ պայմանական), համարվում է, որ ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով սահմանված է ոչ պայմանական ֆրանշիզա:
- 6.10. Ապահովագրական գումարը (Հատուցման սահմանաչափը) սահմանվում է ՀՀ դրամով: Կողմերի համաձայնությամբ Ապահովագրական գումարը կարող է սահմանվել նաև արտարժույթով, որի համարժեքը համարվում է ՀՀ դրամով համապատասխան գումարը:
- 6.11. Եթե Պայմանագրում/Վկայագրում համապատասխան ռիսկի համար Ապահովագրական գումարը սահմանված է արտարժույթով, ապա Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում կիրառվում է հատուցման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար սահմանված փոխարժեքը: Եթե տվյալ արտարժույթի համար ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքը Ապահովագրական հատուցման օրվա դրությամբ գերազանցում է 20 % և ավելին Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքից, ապա Ապահովագրական հատուցման հաշվարկը կատարվում է Պայմանագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքին ավելացրած 20%:



7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

7.1. Ապահովագրավճարը հաշվարկվում է ելնելով Ապահովագրական գումարից (Հատուցման սահմանաչափից) և Ապահովագրողի կողմից սահմանված ապահովագրական սակագնից՝ հաշվի առնելով գույքի տեսակը, քանակը, ապահովագրության պայմանները, ապահովագրության ժամկետը և այլ հանգամանքները, որոնք ազդում են ռիսկի աստիճանի վրա:

7.2. Ապահովագրավճարը կարող է վճարվել կանխիկ Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին, կամ անկանխիկ՝ փոխանցելով Ապահովագրողի հաշվարկային հաշվին:

7.3. Եթե ապահովագրությունն իրականացվում է համարժեք արտարժույթով, ապա Ապահովագրավճարը, հաշվարկման նպատակով, նշվում է արտարժույթով: Ապահովագրավճարը վճարվում է ՀՀ դրամով՝ Ապահովագրավճարի վճարման օրվա դրությամբ՝ ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքով:

Այն դեպքերում, եթե ՀՀ գործող օրենսդրության համաձայն Պայմանագրի/Վկայագրի կողմերի միջև թույլատրվում է հաշվարկներ իրականացնել արտարժույթով, ապա Ապահովագրավճարը Ապահովագրողի կողմից կարող է վճարվել նաև արտարժույթով:

7.4. Ապահովագրավճարի վճարման չափերը և ժամկետները սահմանվում են ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով:

7.5. Ապահովագրողի համաձայնությամբ, Ապահովագրողին կարող է տրվել Ապահովագրավճարը տարածամկետ կարգով վճարելու հնարավորություն:

7.6. Տարածամկետ կարգով վճարվող Ապահովագրավճարի՝ վճարման ենթակա առաջին մասն Ապահովագրողը պարտավոր է վճարել Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելու պահից ոչ ուշ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

7.7. Մեկ տարուց պակաս ժամկետով Պայմանագրի/Վկայագրի կնքելու դեպքում Ապահովագրավճարը վճարվում է միանվագ՝ մինչև Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

7.8. Ապահովագրավճարը Պայմանագրում/Վկայագրում նշված ժամկետներում չվճարելու դեպքում (միանվագ վճարման դեպքում) կամ առաջին հերթական Ապահովագրավճարը չվճարելու դեպքում (տարածամկետ վճարման դեպքում), Պայմանագրի/Վկայագրի համարվում է ուժի մեջ չմտած, և այդ ընթացքում տեղի ունեցած դեպքերը չեն համարվում Ապահովագրական պատահար և Ապահովագրողի մոտ չեն առաջացնում Ապահովագրական հատուցում վճարելու պարտավորություն:

7.9. Եթե Պայմանագրով/Վկայագրով սահմանված է Ապահովագրավճարի վճարման տարածամկետ եղանակ և մինչև Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում Ապահովագրավճարի հերթական մաս(եր)ի վճարումը գրանցվել է Ապահովագրական պատահար, որի արդյունքում Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա գումարը կազմում է Ապահովագրական գումարի 20 (քսան) և ավելի տոկոսը, ապա Ապահովագրողն իրավունք ունի հատուցման ենթակա գումարից հաշվանցել վճարման ենթակա Ապահովագրավճարն ամբողջությամբ և Ապահովագրողին հատուցել առաջացած դրական տարբերությունը:

7.10. Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովագրողի կողմից Ապահովագրավճարը (Ապահովագրավճարի հերթական մասը) չվճարելու դեպքում Ապահովագրողը չի սահմանում լրացուցիչ ժամկետ Ապահովագրավճարի վճարման համար, չի ծանուցում այդ մասին Ապահովագրողին և միակողմանի լուծում է Պայմանագրի/Վկայագրի ազատվելով Պայմանագրով/Վկայագրով սահմանված Ապահովագրավճարի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով առաջացած վնասների դիմաց Ապահովագրական հատուցումներ իրականացնելու պարտականություններից:



8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՔՄԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

8.1. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է գրավոր և պետք է համապատասխանի ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված վավեր գործարքի ընդհանուր պայմաններին:

8.2. Ապահովագրության Պայմանագիր/Վկայագիր կնքելու պահին Ապահովադիրը Ապահովագրողի պահանջով՝

ա) լրացնում է ապահովագրության դիմումը և/կամ Ապահովագրության օբյեկտի նկարագրությունը Ապահովագրողի կողմից սահմանված ձևով և տրամադրում է լրացված դիմումը կամ նկարագրությունը Ապահովագրողին: Դիմումի բոլոր կետերը/նկարագրությունները պետք է լրացվեն ընթեռնելի/հասկանալի ձևով և ճշգրտելով երկակի մեկնաբանությունը: Ապահովագրության դիմումի/նկարագրության մեջ նշված տեղեկատվության իսկության պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը: Լրացված դիմումը/նկարագրությունը ստորագրվում և հաստատվում է Ապահովադիրի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից,

բ) Ապահովագրողի պահանջով Ապահովագրողին է ներկայացնում ապահովագրության ենթակա շարժական գույքի և տեխնիկական սարքավորումների ցանկը՝ նշելով յուրաքանչյուր օբյեկտի հիմնական հատկանիշները և յուրահատկությունները: Գույքի ցանկը ստորագրվում և հաստատվում է Ապահովադիրի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից,

գ) Ապահովագրողին կամ նրա լիազոր ներկայացուցչին հնարավորություն է տալիս զննել ապահովագրության ընդունվող գույքը,

դ) Ապահովագրողին ներկայացնում է ապահովագրության ընդունվող գույքի Ապահովադիրի (Շահառուի) գույքային շահը հավաստող փաստաթղթերը (դրանց պատճենները), սեփականության իրավունքի վկայականը, Ապահովադիրի (Շահառուի) սեփականության իրավունքի փոխանցումը հաստատող պայմանագրերը կամ ժառանգության իրավունքի վկայականը: Ապահովագրողն իրավունք ունի կրճատել ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

8.3. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կնքելուց հետո ապահովագրության դիմումը, օբյեկտների նկարագրությունը և ապահովագրված գույքի ցանկը համարվում են ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի անբաժանելի մասը:

8.4. Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ կամ գործողության ընթացքում Պայմանների դրույթները կարող են փոփոխվել (բացառվել կամ լրացվել) Ապահովագրողի և Ապահովադիրի գրավոր համաձայնությամբ, եթե այդպիսի փոփոխությունները չեն հակասում ՀՀ գործող օրենսդրությանը: Ապահովագրության Պայմանների և Պայմանագրի/Վկայագրի դրույթների միջև հակասությունների առկայության դեպքում առավելությունը տրվում է Պայմանագրի/Վկայագրին:

8.5. Ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ Ապահովագրողի և Ապահովադիրի միջև լրացուցիչ համաձայնագրի ստորագրմամբ:

8.6. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում դրա կորստի դեպքում Ապահովադիրի գրավոր դիմումի հիման վրա Ապահովագրողը տրամադրում է Ապահովադիրին Պայմանագրի/Վկայագրի կրկնօրինակը:

8.7. Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է մեկ տարի ժամկետով, եթե դրանում այլ բան նախատեսված չէ:

8.8. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, ուժի մեջ է մտնում՝

ա) Ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի կանխիկ վճարման դեպքում վճարմանը հաջորդող օրվա ժամը 00:00-ին, բայց ոչ շուտ, քան Պայմանագրում/Վկայագրում նշված գործողության սկզբի օրվա



00:00-ից: Ընդ որում, վճարման օր է համարվում Ապահովագրավճարի ստացականի վրա նշված ամսաթիվը,

բ) Ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի անկանխիկ վճարման դեպքում՝ Ապահովագրողի բանկի հաշվարկային հաշվին փոխանցելու նպատակով Ապահովագրողի հաշվարկային հաշվից դուրս գրման օրվա հաջորդող օրվա ժամը 00:00-ին, բայց ոչ շուտ, քան Պայմանագրում/Վկայագրում նշված գործողության սկզբի օրվա 00:00-ից:

8.9. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը ավարտվում է Պայմանագրում/Վկայագրում նշված գործողության ավարտի տեղական ժամանակով ժամը 24:00-ին:

8.10. Ապահովագրությունը տարածվում է այն Ապահովագրական պատահարների վրա, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելուց հետո, եթե Պայմանագրում/Վկայագրում այլ բան նախատեսված չէ:

8.11. Սույն Պայմանների հիման վրա Պայմանագիր/Վկայագիր կնքելու ժամանակ, Ապահովագիրը տալիս է իր համաձայնությունն առ այն, որ Ապահովագրողը Պայմանագրի/Վկայագրի ողջ գործողության ընթացքում և դրա ավարտից հետո 10 (տասը) տարվա ընթացքում իրավունք ունի մշակել Պայմանագրում/Վկայագրում նշված ֆիզիկական անձանց անձնական տվյալները՝ ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կատարման, վիճակագրական և վերլուծական նպատակներով, և ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարման նպատակով: Ապահովագիրը կրում է անձնական պատասխանատվություն ֆիզիկական անձանց, Շահառուների անձնական տվյալների մշակման համաձայնության համար:

Սույն Պայմանների հիման վրա Պայմանագիր/Վկայագիր կնքելու ժամանակ, Ապահովագիրը նաև տալիս է իր համաձայնությունը Ապահովագրողի այլ ապահովագրատեսակների և ծառայությունների մասին իրեն տեղեկացնելու համար, ինչպես նաև Ապահովագրողի հետ ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի վերակնքելու պայմանների համար:

Վերը նշված նպատակների համար Ապահովագրողը իրավունք ունի Պայմանագրի/Վկայագրի կնքման հետ կապված իրեն հայտնի դարձած անձնական տվյալները փոխանցել երրորդ անձանց, ում հետ Ապահովագրողն ունի կնքված համապատասխան համաձայնություն, որն ապահովում է անձնական տվյալների հուսալի պաշտպանությունը և անօրինական բացահայտման կանխումը:

Ապահովագրողը պարտավորվում է ապահովել Ապահովագրողի անձնական տվյալների անվտանգությունը և գաղտնիությունը սույն կետով նշված նպատակներից բացի այլ նպատակներով:

Անձնական տվյալների մշակման համաձայնությունը կարող է հետ կանչվել անձնական տվյալների սուբյեկտի կողմից ամբողջությամբ կամ մասնակի՝ այլ ապահովագրատեսակների մասով տեղեկացման մասով, Ապահովագրողին գրավոր դիմում ներկայացնելու միջոցով, որտեղ հստակ սահմանված կլինի նշված դիմումի Ապահովագրողի ստացման ամսաթիվը:

Անձնական տվյալների սուբյեկտի կողմից համաձայնության ամբողջությամբ հետ կանչման դեպքում ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը այդ անձի նկատմամբ դադարում է, իսկ եթե տվյալ սուբյեկտը հանդիսանում է Ապահովագիրը, ապա ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը դադարում է ամբողջությամբ: Այդ դեպքում ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը դադարում է վաղաժամկետ՝ տվյալների մշակման համաձայնության հետ կանչման համապատասխան դիմումը ստանալու Ապահովագրողի կողմից ստանալու ամսաթիվից:

8.12. Կնքելով ապահովագրության Պայմանագիր/Վկայագիր Ապահովագիրը տալիս է իր համաձայնությունը Ապահովագրողին ՀՀ գործող օրենսդրության համաձայն ստանալ տեղեկատվություն Ապահովագրողի վարկային պատմության վերաբերյալ: Նշված համաձայնությունը Ապահովագրողի կողմից Ապահովագրողին տրվում է ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կնքման պահից՝ ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում նշված տվյալների և տեղեկատվության ստուգման և Ապահովագրողի վերաբերյալ այլ տեղեկատվության ստացման համար:



9. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ

- 9.1. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը դադարում է հետևյալ դեպքերում.
 - 9.1.1. Պայմանագրում/Վկայագրում սահմանված գործողության ժամկետը լրանալու,
 - 9.1.2. Ապահովագրողի կողմից իր պարտականություններն ամբողջ ծավալով կատարելու,
 - 9.1.3. Ապահովադրի կողմից Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով հերթական Ապահովագրավճարը չվճարելու, եթե Ապահովագրողի կողմից չի տրվել վճարման լրացուցիչ ժամկետ,
 - 9.1.4. դատարանի կողմից ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի անվավեր ճանաչելու որոշում ընդունելու,
 - 9.1.5. ՀՀ գործող օրենսդրության համաձայն Ապահովագրողի լուծարման,
 - 9.1.6. Ֆիզիկական անձ Ապահովադրի մահվան, իրավաբանական անձ Ապահովադրի լուծարման,
 - 9.1.7. Ապահովադրի (Շահառուի) կողմից գույքի օտարման,
 - 9.1.8. Ապահովադրի պահանջով՝ այդ մասին ոչ պակաս, քան 15 (տասնհինգ) օր առաջ գրավոր դիմում ներկայացնելով Ապահովագրողին,
 - 9.1.9. Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ,
 - 9.1.10. ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
- 9.2. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Ապահովագրողի պահանջով ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:
- 9.3. Ֆիզիկական անձ Ապահովադրին իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (Մտածելու ժամանակ): Այդ դեպքում ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է լուծված ֆիզիկական անձ Ապահովադրի կողմից ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու մասին Ապահովագրողին ծանուցելու օրվան հաջորդող օրվանից: Ապահովադրի դիմումի հետ պետք է ներկայացնի ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի բնօրինակը և Ապահովագրավճարի վճարման անդորրագրի բնօրինակը: Նշված փաստաթղթերի բացակայության դեպքում Ապահովադրի անձամբ դիմումում նշում է դրանց չներկայացման պատճառները: Նշված փաստաթղթերը չներկայացնելը հիմք չի հանդիսանում ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ լուծման մերժման համար:
- 9.4. Մտածելու ժամանակը չի կիրառվում հետևյալ դեպքերում.
 - ա) Պայմանագրի գործողության ժամկետը և (կամ) Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ապահովագրության գործողության ժամկետը չի գերազանցում 1 (մեկ) ամիսը,
 - բ) կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում ֆիզիկական անձ Ապահովադրի դիմել է Ապահովագրական հատուցում ստանալու պահանջով:
- 9.4.1. Ֆիզիկական անձ Ապահովադրի կողմից Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվանից 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (Մտածելու ժամանակ) Պայմանագրից/Վկայագրից հրաժարվելու դիմում ներկայացնելու դեպքում՝
 - Ապահովագրավճարն ամբողջությամբ վերադարձվում է Ապահովադրին, եթե Ապահովադրի հրաժարվել է Պայմանագրից/Վկայագրից մինչև դրա գործողության ժամկետի սկիզբը,
 - Ապահովագրավճարը վերադարձման ենթակա է մասնակի՝ ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի չլրացած օրերի ժամկետին համամասնորեն, եթե Ապահովադրի հրաժարվել է ապահովագրության Պայմանագրից/Վկայագրից ապահովագրության գործողության ժամկետի սկզբից հետո:



9.5. Ֆիզիկական անձ հաճախորդը իրավունք չունի պահանջելու Ապահովագրական հատուցում Մտածելու ժամանակի ընթացքում տեղի ունեցած Ապահովագրական պատահարի համար հետևյալ պայմանների միաժամանակ առկայության դեպքում.

ա) Մտածելու ժամանակի ընթացքում Ապահովագրական պատահարի մասին նա չի ծանուցել Ապահովագրողին,

բ) եթե այդ Ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո ֆիզիկական անձ հաճախորդը մինչև Մտածելու ժամանակի ավարտը ծանուցել է Ապահովագրողին Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու մասին:

9.6. Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է դադարած Ապահովագրի գրավոր դիմումը ստանալու ամսաթվի կամ Ապահովագրողի և Ապահովագրի համաձայնությամբ այլ ամսաթվի ժամը 00:00-ից, բայց ոչ ուշ, քան սույն կետի առաջին պարբերությամբ նշված ժամկետից:

9.7. Ապահովագրավճարի (Ապահովագրավճարի մի մասի) վերադարձը իրականացվում է Ապահովագրի Պայմանագրից/Վկայագրից հրաժարվելու դիմումը ներակայացնելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

9.8. Եթե ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը վաղաժամկետ դադարում է Ապահովագրական պատահարից տարբերվող այլ հանգամանքների բերումով Ապահովագրական պատահարի հայտ գալու հնարավորության վերանալու հետ, Ապահովագրողն իրավունքի ունի պահել գործած օրերի Ապահովագրավճարը:

9.9. Եթե Պայմանագրով/Վկայագրով կամ սույն Պայմանների այլ կետ(եր)ով այլ բան նախատեսված չէ, վերադարձման ենթակա Ապահովագրավճարի մի մասը հաշվարկվում է հետևյալ բանաձևով,

$$ՎԱ = \frac{(U - 35\% * U) * n}{N} - Z, \text{ որտեղ}$$

ՎԱ-վերադարձման ենթակա Ապահովագրավճարի մասը,

U- ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով վճարված Ապահովագրավճար,

n-վաղաժամկետ լուծման ամսաթվից մինչև ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի գործողության ավարտի օրերի քանակ,

Z-վճարված և վճարման ենթակա Ապահովագրական հատուցումներ,

N-Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի օրեր:

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

10.1. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովագրիչը (Շահառուն) պարտավոր է անհապաղ, բայց ոչ ուշ, քան ի հայտ գալուց 24 ժամվա ընթացքում, Ապահովագրողին գրավոր տեղեկացնել Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին Ապահովագրողին հայտնած հանգամանքների փոփոխությունների մասին, որոնք մեծացնում են Ապահովագրական ռիսկը:

10.2. Ապահովագրական ռիսկը մեծացնող հանգամանքների փոփոխություններ են համարվում Պայմանագրում/Վկայագրում կամ գրավոր դիմումում համաձայնեցված ապահովագրության հանգամանքները, այդ թվում նաև, բայց չսահմանափակվելով՝



-ապահովագրված գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքի փոխանցումը այլ անձի,

-ապահովագրված գույքի վարձույթի, վարձակալության, լիզինգի, գրավի հանձնումը,

-ապահովագրված գույքի գտնվելու շենքերում, շինություններում և կառույցներում շինման տաժարին, վերանորոգման, վերականգնման աշխատանքների իրականացնելը:

10.3. Ապահովագրական ռիսկը մեծացանալու հանգամանքների մասին տեղեկացված Ապահովագրողն իրավունք ունի փոփոխել Պայմանագրի/Վկայագրի պայմանները և/ կամ պահանջել Ապահովադրից լրացուցիչ վճար ռիսկը մեծանալուն համապատասխան:

10.4. Եթե Ապահովադիրը (Շահառուն), իրավահաջորդը հրաժարվում է Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխությունից կամ լրացուցիչ Ապահովագրավճար վճարելուց, ապա Ապահովագրողն իրավունք ունի պահանջել լուծել ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը ՀՀ գործող օրենսդրությանը համաձայն:

10.5. Եթե Ապահովադիրը (Շահառուն) չեն հայտնում Ապահովագրողին ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին հայտնած էական հանգամանքների փոփոխության մասին, և եթե այդ հանգամանքները բերում են վնասի առաջացման, ապա ապահովագրության Պայմանագիր/Վկայագիրը համարվում է կողմերի համաձայնությամբ վաղաժամկետ դադարած՝ Ապահովագրական ռիսկը մեծանալու հանգամանքներն ի հայտ գալու պահից:

10.6. Ապահովագրողն իրավունք չունի պահանջելու լուծել ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը, եթե Ապահովագրական ռիսկը մեծացնող հանգամանքները ծանուցման պահին վերացել են:

11. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11.1. Ապահովադիրն իրավունք ունի.

11.1.1. Ծանոթանալ սույն Պայմանների հետ,

11.1.2. Պայմանագիր/Վկայագիր կնքել իր լիազորված անձի միջոցով,

11.1.3. Պայմանագրի/Վկայագրի պայմաններում փոփոխություններ կատարելու առաջարկ ներկայացնել Ապահովագրողին,

11.1.4. սույն Պայմաններին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան վաղաժամ լուծել Պայմանագիրը/Վկայագիրը,

11.1.5. ՀՀ գործող օրենսդրության համաձայն ստանալ տեղեկատվություն Ապահովագրողի վերաբերյալ,

11.1.6. Պայմանագրում/Վկայագրում նշված Շահառուին փոխարինել մեկ այլ անձով՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ապահովագրողին: Շահառուն չի կարող փոխարինվել մեկ այլ անձով, եթե նա արդեն կատարել է Պայմանագրում/Վկայագրում նախատեսված որևէ պարտավորություն կամ Ապահովագրողին ներկայացրել է Ապահովագրական հատուցում ստանալու դիմում,

11.1.7. Պայմանագրի/Վկայագրի պայմաններին համապատասխան ստանալ Ապահովագրական հատուցում:

11.2. Ապահովադիրը պարտավոր է.

11.2.1. Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին Ապահովագրողին հայտնել իրեն հայտնի այն հանգամանքների մասին, որոնք կարող են էական նշանակություն ունենալ Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականության և դրա հետևանքով առաջացած հնարավոր վնասների չափը որոշելու համար, եթե այդ հանգամանքներն Ապահովագրողին հայտնի չեն և չեն կարող հայտնի լինել: Բոլոր դեպքերում էական են համարվում ապահովագրության



Պայմանագրում/Վկայագրում որոշակիորեն համաձայնեցված հանգամանքները, ապահովագրության դիմումը կամ ապահովագրված օբյեկտների նկարագրությունը/ցանկը,

11.2.2. Պայմանագրով/Վկայագրով սահմանված Ապահովագրավճարը վճարել ժամանակին՝ Պայմանագրում/Վկայագրում նշված չափով և կարգով,

11.2.3. հետևել հակահրդեհային անվտանգության, շահագործման, ապահովագրված գույքի տեխնիկական սպասարկման կանոններին, ինչպես նաև ժամանակին իրականացնել անհրաժեշտ վերանորոգման և կանխարգելիչ աշխատանքներ այն շենքեր, շինություններ և կառույցներում, որոնցում գտնվում է ապահովագրված գույքը,

11.2.4. ձեռնարկել խելամիտ և հասանելի միջոցառումներ հնարավոր վնասի կանխարգելման և նվազեցման համար:

11.3. *Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձություն ի հայտ գալու դեպքում Ապահովադիրը պարտավոր է.*

11.3.1. անհապաղ, բայց Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի մասին իրեն հայտնի դառնալու պահից ոչ ուշ, քան 24 (քսանչորս) ժամվա ընթացքում գրավոր դիմել համապատասխան իրավասու մարմիններին (ներքին գործերի մարմիններ, հակահրդեհային ծառայություն, վթարային ծառայություն, ԱԻՆ ստորաբաժանում և այլն) և ապահովել կատարված դեպքի փաստաթղթային ձևակերպումը և տեղի ունեցած իրադարձության հաստատումը, որի հետևանքով ապահովագրված գույքին պատճառվել է վնաս, պատահարի պատճառների, ընթացքի, հետևանքների, պատճառված վնասի բնույթի և չափի մասին նշումով,

11.3.2. ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վնասի կանխարգելման և նվազեցման ուղղությամբ, և գործել այնպես, ինչպես կգործեր, եթե գույքը ապահովագրված չլիներ,

11.3.3. Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի ի հայտ գալու պահին՝ անհապաղ, բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով Պայմանագրում/Վկայագրում նշված շուրջօրյա հեռախոսահամարով և հայտնել հետևյալ տեղեկությունները

ա) Ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի համարը և կնքման ամսաթիվը,

բ) ապահովագրված օբյեկտի անվանումը և հասցեն, որին վնաս է հասցվել,

գ) վնասը ի հայտ գալու ամսաթիվը և ժամը,

դ) վնասի բնույթի, պատճառի հանգամանքների մասին տեղեկություն,

ե) Ապահովադրի գործողությունները վնասը ի հայտ գալու պահին,

զ) վնասի ենթադրելի չափը,

11.3.4. մինչև Ապահովագրողի ներկայացուցչի ժամանելը, ապահովագրված գույքը պահպանել (վնասված և չվնասված) այն տեսքով, որում այն հայտնվել է Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձությունը տեղի ունենալուց հետո: Ապահովադիրն իրավունք ունի Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության պատկերում փոխություններ կատարել այն դեպքում, եթե դա թելադրվում է իրավասու մարմինների կողմից՝ ելնելով անվտանգության կամ վնասի չափի նվազեցման միտումներից: Այն դեպքում, երբ անհնար է ապահովագրված գույքը պահպանել այն վիճակում, որում այն հայտնվել է Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձությունից հետո, Ապահովադիրը պարտավոր է ամրագրել իրադարձության հետ կապված բոլոր վնասները՝ լուսանկարման, տեսաձայնագրման կամ այլ միջոցով, որը թույլ կտա ամրագրել վնասը մինչև Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության պատկերը փոխվելը և տրամադրել դրանք Ապահովագրողին,

11.3.5. Ապահովագրողին կամ նրա լիազոր ներկայացուցչին հնարավորություն ընձեռել վնասված գույքը ուսումնասիրելու և զննելու՝ վնասների պատճառների, չափի և այլ հանգամանքների հայտնաբերման նպատակով, առանց Ապահովագրողին նախապես տեղեկացնելու և վերջինիս



համաձայնությունը ստանալու չփոփոխել պատահարից հետո առկա վիճակը, ինչպես նաև Ապահովագրողի պահանջով ապահովել իր ներկայացուցչի ներկայությունը վնասված գույքի զննման ժամանակ,

11.3.6. Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության մասին 11.3.3. կետով սահմանված կարգով Ապահովագրողին տեղեկացնելուց հետո 60 (վաթսուն) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին ներկայացնել գրավոր դիմում՝ Ապահովագրական հատուցում ստանալու համար:

11.3.7. Ապահովագրական հատուցում ստանալու դիմում ներկայացնելու դեպքում Ապահովագրողին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը

- 1) Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը,
 - 2) Ապահովագրողի մոտ Ապահովադրի (Շահառուի) շահերը ներկայացնելու իրավունք ընձեռող լիազորագիր, եթե դիմումը ներկայացվում է Ապահովադրի ներկայացուցչի կողմից,
 - 3) Ապահովագրական հատուցում վճարելու համար գրավոր դիմում՝ Ապահովագրողի կողմից սահմանված ձևով,
 - 4) գույքի ձեռքբերման և արժեքը հաստատող փաստաթղթեր(եթե այդպիսիք առկա են),
 - 5) Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի օրվա դրությամբ Ապահովագրված անշարժ գույքի նկատմամբ Ապահովադրի սեփականության իրավունքը և այլ գույքային շահը հաստատող փաստաթղթեր (սեփականության իրավունքի վկայական, առք ու վաճառքի պայմանագիր, վարձակալության պայմանագիր և այլն),
 - 6) վնասված և ոչնչացված գույքի ցանկը՝ Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի օրվա դրությամբ արժեքի նշումով, ինչպես նաև պահպանված և փրկված գույքի ցանկը՝ Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի օրվա դրությամբ արժեքի նշումով,
 - 7) օրենքով համապատասխան պատահարը քննելու իրավասություն ունեցող իրավասու մարմինների կողմից տրված փաստաթղթերի բնօրինակները կամ դրանց վավերացված պատճենները՝ (տեղեկանքներ, որոշումներ, վճիռներ և այլն), որոնցում ամբողջությամբ նշված է.
 - պատահարի վայրը, տեղի ունենալու ամսաթիվը, ժամը, հանգամանքները և հետևանքները, նշված մարմինների (պաշտոնատար անձանց) տեղեկացնելու և ժամանման ամսաթիվը և ժամը, վնասված (ոչնչացված)ապահովագրված գույքի անվանումը, վնասների բնույթը և ցանկը,
 - ապահովագրված գույքի սեփականատիրոջ լրիվ անուն/ազգանուն/հայրանուն/անվանումը,
 - տեղի ունեցած իրավախախտումը և վարչական տույժի ենթարկելու որոշումը, կամ քրեական գործ հարուցվելու վերաբերյալ որոշումը, այլ տեղեկություններ, որոնք որպես կանոն պետք է նշված լինեն նման բնույթի փաստաթղթերի մեջ,
 - գողության, կողոպուտի կամ ավազակության հատկանիշներով հարուցված քրեական գործի հարուցման վերաբերյալ որոշում,
 - 8) օթերևութաբանական (սեյսմիկ) ծառայության պետական հաստատության կողմից համապատասխան բնական աղետի բնույթը և ժամանակը հաստատող տեղեկություններ,
 - 9) իրավասու մարմինների և/կամ ծառայությունների կողմից տրամադրված պատահարների (ջրատար խողովակների և այլ ինժեներական համակարգերի վթարի) ժամը, վայրը, բնույթը և պատճառները հաստատող տեղեկություններ:
- Եթե համապատասխան իրավասու մարմինները հրաժարվել են տրամադրել Ապահովադրին որևէ փաստաթուղթ, ապա Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին է ուղարկում իր կողմից վերոհիշյալ մարմիններին ուղարկված համապատասխան հարցման և դրա գրավոր պատասխանի պատճենը:



11.3.8. անհրաժեշտության դեպքում Ապահովագրողին կամ նրա լիազոր ներկայացուցչին տալ լիազորագիր՝ Ապահովադրի (Շահառուի) իրավունքների պաշտպանության և վնասի կարգավորման գործը իրականացնելու համար,

11.3.9. Ապահովագրողին փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, հայտնել բոլոր տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողին մեղավոր անձանց նկատմամբ հետադարձ պահանջի իրավունքի (սուբրոգացիա) իրականացման համար,

11.3.10. իրեն հայտնի դառնալուց անմիջապես հետո, Ապահովագրողին տեղեկացնել կորած ապահովագրված գույքի գտնվելու վայրի մասին, եթե վերջինս գտնվել է ու հանձնվել Ապահովադրին (Շահառուին): Ապահովագրողին վերադարձնել վճարված Ապահովագրական հատուցումը վերադարձված ապահովագրված գույքի համար՝ մասհանելով վնասների վերացման համար կատարված ծախսերը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,

11.3.11. Ապահովագրողին անմիջապես հայտնել կորցրած (ոչնչացված) կամ վնասված ապահովագրված գույքի դիմաց երրորդ անձանց կողմից փոխհատուցում ստանալու մասին,

11.3.12. չգործել ի վնաս Ապահովագրողի շահերի, չհրաժարվել պատահարի վերաբերյալ քննություն իրականացնելու պահանջից, ՀՀ օրենսդրության համաձայն քննությունը դադարեցնելու հետևանք առաջացնող հայտարարություններ չանել՝ առանց Ապահովագրողի հետ նախապես համաձայնեցնելու:

11.4. Ապահովագրության Պայմանագրից/Վկայագրից կամ Պայմաններից բխող պարտականությունների Ապահովադրի կողմից չկատարելու դեպքում, բացառությամբ Ապահովագրավճարի վճարման, այդ պարտականությունները հավասարազոր տարածվում են Շահառուի վրա: Շահառուի կողմից այդ պարտականությունների չկատարումը ունենում է նույն հետևանքները, ինչը որ կրում է Ապահովադրը:

11.5. *Ապահովագրողն իրավունք ունի.*

11.5.1. ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջել անվավեր ճանաչել Պայմանագիրը/Վկայագիրը, եթե Պայմանագիրը/Վկայագիրը կնքելուց հետո հաստատվի, որ Ապահովադրը Ապահովագրողին գիտակցաբար հայտնել է կեղծ տեղեկություններ իրեն հայտնի հանգամանքների վերաբերյալ, որոնք ունենին էական նշանակություն Ապահովագրական պատահարի հայտ գալու հավանականության որոշման և հնարավոր վնասի չափի մասին,

11.5.2. ձեռնարկել այնպիսի միջոցառումներ, որոնք նա անհրաժեշտ է համարում վնասը նվազեցնելու համար,

11.5.3. ինքնուրույն պարզել վնասի առաջացման պատճառներն ու հանգամանքները, սահմանել պատճառված վնասի չափը, ինչպես նաև հարցումներ կատարել իրավասու մարմիններին Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի փաստը, պատճառը և պատճառված վնասի չափը հաստատող փաստաթղթերի և տեղեկատվության ստացման նպատակով,

11.5.4. հետաձգել Ապահովագրական հատուցման վճարման մասին որոշման ընդունումը, մինչև Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող դեպքի բոլոր հանգամանքների պարզաբանումը, այդ թվում մինչև իրավասու մարմինների կողմից վերջիններիս ուղղված գրավոր հարցումների պատասխանները ստանալը, ապահովագրված գույքի վնասման, կորստի կամ ոչնչացման հետևանքով քրեական գործի հարուցման դեպքում՝ մինչև դատարանի վճռի կայացումը կամ քրեական գործով վարույթն ավարտելը,

11.5.5. ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում մերժել Ապահովագրական հատուցման վճարումը՝ Պայմանագրով/Վկայագրով և/կամ սույն Պայմաններով սահմանված Ապահովադրի (Շահառուի) պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում,



11.5.6. Շահառուից պահանջել ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով Ապահովադրի վրա դրված, սակայն վերջինիս կողմից չկատարված պարտականությունների կատարում:

11.6. *Ապահովագրողը պարտավոր է.*

11.6.1. Ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ Ապահովադրին ծանոթացնել սույն Պայմաններին,

11.6.2. չհրապարակել Ապահովադրի (Շահառուի) մասին ունեցած տեղեկությունները, նրանց գույքային ունեցվածքի տեղեկությունները, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

11.6.3. կատարել ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով ստանձնած պարտականությունները,

11.6.4. Ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի և սույն Պայմանների համաձայն Ապահովադրի կողմից բոլոր պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց և Ապահովագրական պատահարի փաստը, պատճառները և չափը հաստատող բոլոր հարցերը կարգավորելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում որոշում կայացնել տեղի ունեցած պատահարը ապահովագրական ճանաչելու կամ չճանաչելու վերաբերյալ:

11.6.5. Դեպքը Ապահովագրական պատահար ճանաչելուց հետո իրականացնել Ապահովագրական հատուցում 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

12. **ՎՆԱՍԻ ԶԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

12.1. Ապահովագրողի կողմից վնասի չափը որոշվում է գնման և վնասի չափը հավաստող փաստաթղթերի հիման վրա, ինչպես նաև Պայմանագրի/Վկայագրի և սույն Պայմանների համապատասխան Ապահովադրի կողմից Ապահովագրական պատահարի առաջացումը հաստատող փաստերի, պատճառների և վնասի չափի մասին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո Ապահովագրողը կայացնում է Ապահովագրական հատուցման վճարման/մասնակի վճարման կամ վճարումը մերժելու մասին որոշում՝ առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

12.2. Ապահովագրական հատուցման չափը որոշվում և սահմանափակվում է պատճառված վնասի մեծությամբ, բայց չի կարող գերազանցել ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով սահմանված Ապահովագրական գումարը (Հատուցման սահմանաչափը) և/կամ գույքի իրական (շուկայական) արժեքը: Ապահովագրողի կողմից Ապահովագրական հատուցումը իրականացվում է նվազեցնելով ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով սահմանված Չհատուցվող գումարը (եթե նախատեսված է):

12.3. Ապահովագրողի կողմից փոխհատուցման ենթակա վնասը նվազեցնելու նպատակով կատարված ծախսերը (կրակի մարման կամ տարածման կանխման, և այլն), եթե այդ ծախսերը եղել են անհրաժեշտ կամ կատարվել են Ապահովագրողի ցուցումներով, հատուցման ենթակա են, եթե նույնիսկ համապատասխան միջոցառումները անհաջող են անցել: Այդ ծախսերը Ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի նկատմամբ համասնորեն փոխհատուցվում են, անկախ այն բանից, որ այլ վնասների հատուցման հետ միասին դրանք կարող են գերազանցել Ապահովագրական գումարը:

Եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ, վնասի նվազեցման նպատակով Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա ծախսերը, ինչպես նաև Ապահովագրական պատահարից հետո տարածքների մաքրման և շինությունների փլուզման հետ կապված ծախսերը փոխհատուցվում են ոչ ավել, քան Ապահովագրական պատահարի հետևանքով ապահովագրված գույքի Ապահովագրական գումարի (Հատուցման սահմանաչափի) 10 (տասը) տոկոսը:



12.4. Ամբողջական կորուստ/ոչնչացում է համարվում, եթե վնասված ապահովագրված գույքի վերականգնումը անհնար է կամ վերականգնման ծախսերը հավասար են կամ ապահովագրության Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ գերազանցում են ապահովագրված գույքի իրական (շուկայական) արժեքը:

12.5. Ապահովագրական փոխատուցումը վճարվում է՝

12.5.1. գույքի ամբողջական կորստի կամ ոչնչացման դեպքում Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին ապահովագրված գույքի իրական (շուկայական) արժեքի չափով՝ նվազեցնելով հետագա օգտագործման համար պիտանի մնացորդների չափով, բայց ոչ ավել քան Ապահովագրական գումարը (Հատուցման սահմանաչափը):

Գույքի ամբողջական կորստի կամ ոչնչացման դեպքում Ապահովադիրը (Շահառուն) իրավունք ունի Ապահովագրողի համաձայնությամբ հրաժարվել ապահովագրված գույքի նկատմամբ իր իրավունքներից՝ հոգուտ Ապահովագրողի: Այդ դեպքում Ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրված գույքի իրական (շուկայական) արժեքի չափով, բայց ոչ ավել քան Ապահովագրական գումարը (Հատուցման սահմանաչափը): Ընդ որում, մինչև Ապահովագրական հատուցումը վճարելը Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողի հետ կնքել կորցրած (ոչնչացած) գույքի կամ դրա մնացորդների իրավունքի փոխանցման մասին համաձայնություն,

12.5.2. գույքի վնասման դեպքում վերականգնման ծախսերի չափով, բայց ոչ ավել, քան Ապահովագրական գումարը (Հատուցման սահմանաչափը) և Ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ապահովագրված գույքի իրական (շուկայական) արժեքը:

12.6. Գույքի իրական (շուկայական) արժեքը որոշվում է՝

ա) շենքերի, շինությունների, և կառույցների կոնստրուկտիվ տարրերի համար՝ տվյալ տարածքում շենքերի և շինությունների շինարարության արժեքի չափով՝ հաշվի առնելով Ապահովագրական պատահարի օրվա դրությամբ դրանց մաշվածությունը և շահագործման-տեխնիկական վիճակը,

բ) բազմաբնակարան շենքերի/սենյակների համար այն ծախսերի չափով, որոնք անհրաժեշտ են ապահովագրված բնակարանին համանման բնակարանի ձեռքբերման համար՝ հաշվի առնելով դրա գտնվելու վայրը,

գ) հարդարման տարրերի համար՝ վերանորոգման ծախսերի չափով, ներառյալ նաև Ապահովագրական պատահարի օրվա դրությամբ նյութերի և աշխատանքների արժեքը,

դ) շարժական գույքի և տեխնիկական սարքավորումների համար՝ Ապահովադրի տվյալ գույքի, սարքավորումների ձեռքբերման համար կատարված ծախսերի չափով, հաշվի առնելով Ապահովագրական պատահարի օրվա դրությամբ դրանց մաշվածությունը և շահագործման-տեխնիկական վիճակը, բայց ոչ ավել, քան ապահովագրված գույքի համանման գույքի ձեռքբերման համար անհրաժեշտ ծախսերը: Շարժական գույքի և տեխնիկական սարքավորումների մաշվածությունը հաշվարկվում է Ապահովադրի մոտ առկա (1) կամ բացակայող (2) գույքի արժեքը հավաստող փաստաթղթերի հիման վրա (առքուվաճառքի պայմանագրի, ապրանքային չեկեր, ՀԴՄ չեկեր, հաշիվ-ապրանքագրեր և այլն)՝ (1) հաշվի առնելով շահագործման ժամկետը և նոր օբյեկտի արժեքը (համաձայն անդորրագրի) * k1 կամ (2) հաշվի առնելով շահագործման ժամկետը և նոր օբյեկտի միջին իրական (շուկայական) արժեքը * k1, որտեղ k1-ը որոշվում է համաձայն հետևյալ աղյուսակի՝

Ապահովագրության օբյեկտ	շահագործման տարիներ					
	1	2	3	4	5	>5
կահույք, գորգեր, ինտերիերի առարկաներ, երաժշտական գործիքներ, կենցաղի պարագաներ,	*k1 - շահագործման ժամկետից կախված գործակից					
		0,88		0,76	0,70	



սանտեխնիկական սարքավորումներ, սառնաներ, կաթսաներ, ջեռոցներ, ջրի մաքրման համակարգեր, ջրամատակարարման, գազամատակարարման, էլեկտրականության, օդափոխման և օդորակման համակարգեր, անվտանգության համակարգեր և այլն:	0,94		0,82			0,06 յուրաքանչյուր տարի
կենցաղային տեխնիկա, ներառյալ սառնարաններ, լվացքի մեքենաներ, աման լվացող մեքենաներ, փոշեկուլներ	0,90	0,80	0,70	0,60	0,50	0,10 յուրաքանչյուր տարի
էլեկտրոնային տեխնիկա, ներառյալ հեռուստացույցներ, լուսանկարչական սարքավորումներ, աուդիո սարքավորումներ	0,88	0,76	0,64	0,52	0,40	0,12 յուրաքանչյուր տարի
խոհանոցի պարագաներ, հագուստ, ներքնագզեստ, համակարգիչներ, նոթբուքեր, գրասենյակային սարքավորումներ	0,80	0,60	0,40	0,20	-	-

12.7. Վերականգնման ծախսերը ներառում են.

- վերանորոգման (վերականգնման) համար անհրաժեշտ նյութերի և պահեստամասերի ծախսերը,
- վերանորոգման աշխատանքների ծախսերը,
- մինչև վերանորոգման վայր նյութերի առաքման ծախսերը և այլ ծախսերը, որոնք անհրաժեշտ են ապահովագրված գույքի անմիջապես Ապահովագրական պատահարից առաջ գտնվելու վիճակը վերականգնելու համար, հաշվի առնելով Ապահովագրական պատահարի օրվա դրությամբ դրանց մաշվածությունը և շահագործման-տեխնիկական վիճակը:

Վերականգնման աշխատանքները չեն ներառում.

- ապահովագրված գույքի ժամանակային կամ օժանդակող վերանորոգման համար առաջացած ծախսերը,
- հրատապ ծախսերը,
- անհրաժեշտությունից ավել կատարված այլ ծախսերը:

12.8. Ապահովագրողը վճարում է նաև Ապահովագրական պատահարի ժամի, վայրի, բնույթի և պատճառների իրավասու մարմինների և/կամ ծառայությունների տրամադրած փաստաթղթերի համար կատարված ծախսերը, որոնց ստացման անհրաժեշտությունը պահանջվում է Ապահովագրողի կողմից:

12.9. Վերականգնման ծախսերը որոշելու ժամանակ հաշվի է առնվում վնասված ապահովագրված գույքի վերականգնման (վերանորոգման) ընթացքում փոխարինման ենթակա բաղադրիչների, մասերի, հանգույցների և դետալների մաշվածությունը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ: Վերականգնման ծախսերը կատարվում են համապատասխան տարածաշրջանում միջին գների հիման վրա:

12.10. Ապահովագրական հատուցման գումարը Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ընթացքում բոլոր Ապահովագրական պատահարների գծով չի կարող գերազանցել Պայմանագրով/Վկայագրով սահմանված Ապահովագրական գումարը (Հատուցման սահմանաչափը), բացառությամբ սույն Պայմանների 12.3. կետով նախատեսված դեպքում:

12.11. Եթե Ապահովագրական պատահարն ի հայտ գալու պահին գույքը ապահովագրված է եղել մի քանի ապահովագրական ընկերությունների կողմից (կրկնակի ապահովագրություն), ապա Ապահովագրական հատուցումը չի կարող գերազանցել դրա իրական (շուկայական) արժեքը: Ընդ



որում ապահովագրական ընկերություններից յուրաքանչյուրը Ապահովագրական հատուցումը վճարում է Ապահովադրի կողմից կնքված ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում նշված գույքի Ապահովագրական գումարի նկատմամբ բոլոր կնքված ապահովագրության Պայմանագրերի/Վկայագրերի Ապահովագրական գումարի համամասնության չափով:

12.12. Այն դեպքերում, երբ Ապահովագրական պատահարի հետևանքով պատճառված վնասը հատուցվել է երրորդ անձանց կողմից, ապա Ապահովագրողը հատուցում է միայն հատուցման ենթակա գումարի և երրորդ անձանց կողմից վճարված գումարի տարբերությունը:

12.13. Այն դեպքում, երբ Ապահովագրական հատուցման վճարումից հետո հայտնի է դառնում, որ Ապահովադիրը (Շահառու) իրավունք չունի ստանալ Ապահովագրական հատուցում, ապա նա պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել Ապահովագրական հատուցումը՝ Ապահովագրողի կողմից գրավոր պահանջ ներկայացնելուց հետո հնգօրյա ժամկետում:

12.14. Եթե Ապահովագրողի կամ Ապահովադրի միջև առաջացել է անհամաձայնություն պատճառված վնասի չափի վերաբերյալ, ապա նրանցից յուրաքանչյուրը իրավունք ունի իր հաշվին անցկացնել փորձագիտական եզրակացություն: Մի կողմի նշանակված փորձագիտական եզրակացությունը պարտադիր չի մյուս կողմի համար:

12.15. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովագրական պատահարի հատկանիշներ ունեցող իրադարձության ի հայտ գալու դեպքում, Ապահովադիրը մինչև Ապահովագրողին Ապահովագրական հատուցման համար դիմելը պարտավոր է վճարել ամբողջ Ապահովագրավճարը, եթե Ապահովագրության Պայմանագիրը/Վկայագիրը կնքվել է տարածամկետ եղանակով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

Ապահովագրական հատուցման օր է համարվում Ապահովագրողի հաշվարկային հաշվից դրամական միջոցների դուրս գալը և Ապահովադրի (Շահառուի) հաշվարկային հաշվին փոխանցելը:

12.16. Եթե վերանորգման արժեքը հաշվի, հանձնարարականի կամ հաշվարկի մեջ նշված է արտարժույթով, կամ ապահովագրության Պայմանագրում/Վկայագրում Ապահովագրական գումարը նշված է համարժեք արտարժույթով, ապա ապահովագրված գույքի կորստի կամ ամբողջական ոչնչացման դեպքում կիրառվում է Ապահովագրական հատուցման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքը : Եթե ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքը Ապահովագրական հատուցման վճարման օրվա դրությամբ 20 %-ով գերազանցում է Ապահովագրական պատահարը տեղի ունենալու օրվա դրությամբ ԿԿ կենտրոնական բանկի կուրսը, ապա և ավելին Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքից, ապա Ապահովագրական հատուցման հաշվարկը կատարվում է Ապահովագրական պատահարի օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքին ավելացրած 20%:

Ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով կարող է սահմանվել արտարժույթի փոխարժեքի մեծության փոփոխման այլ սահմանափակում:

12.17. Ապահովագրողն իրավունք ունի մերժել Ապահովադրի Ապահովագրական հատուցում վճարելը, եթե.

ա) Ապահովադիրը Ապահովագրական պատահարն իրեն հայտնի դառնալու պահից, ապահովագրական Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և կարգով չի տեղեկացրել Ապահովագրողին այն ի հայտ գալու մասին,

բ) Ապահովադիրը դիտավորյալ չի ձեռնարկել ողջամիտ և մատչելի միջոցներ՝ հնարավոր վնասը նվազեցնելու համար,

գ) Ապահովադիրը գիտակցաբար ներկայացրել է կեղծ, իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ և/կամ փաստաթղթեր,

դ) Ապահովադիրը Ապահովագրողին չի փոխանցել բոլոր փաստաթղթերը և ապացույցները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրողի կողմից իրեն անցած պահանջի իրավունքի (սուբրոգացիա) համար,



ե) վնասված գույքի հետվթարային վիճակը չի պահպանվել և կատարվել են ցանկացած տիպի փոփոխություններ՝ առանց Ապահովագրողի հետ նախապես համաձայնեցնելու: ,

զ) սույն Պայմաններով սահմանված պարտականությունները չեն կատարվել Ապահովադրի (Շահառուի) կողմից, ինչպես նաև Պայմաններով սահմանված այլ դեպքերում:

12.18. Ապահովագրական հատուցման վճարման մերժման մասին որոշումը Ապահովադրին տեղեկացվում է գրավոր՝ մերժման հիմնավոր պատճառաբանությամբ:

12.19. Ապահովագրողի Ապահովագրական հատուցումը վճարելու մեծումը կարող է բողոքարկվել Ապահովադրի կողմից դատական կարգով:

13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

13.1. Սույն Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրից/Վկայագրից բխող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ գործող օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

13.2. Ապահովադրի (Շահառուի) և Ապահովագրողի միջև վերջինիս Պայմանագրով/Վկայագրով սահմանված պարտականությունների կատարման հետ կապված տարաձայնությունների առկայության դեպքում, մինչև Ապահովագրողին հայցապահանջ ներկայացնելը, Ապահովադիրը (Շահառուն) Ապահովագրողին է ներկայացնում հայցադիմումը՝ ներկայացված պահանջը հիմնավորող փաստաթղթերի հետ: